


ման գաղտնիքը՝ կանոնադատարեան լիտեօն վրայ կը դառնայ, ինչպէս ընդհակառակն աւ մէն ընկերութեանց խանգարման գաղտնիքն ալ անկանոնադատարեան ստնակին վրայ կը շրջի :

Այս վայրկեանիս յարմար ժամանակ միտքս կու գայ անմոռանալի Գրիգոր Արծրունու այն այս մասին տասնեակ մը տարիներ առաջ գրած տողերը, մեր ազգին վանականաց կամ հոգեւոր հիմնարկութեանց ուղղած պատուէրները, որոնք սակայն լու կ'ըլլար սկիզբի տառերով գրո՞ւմուէին նաեւ ամէն մէկ Հաստատութեանց Սահմանադրերուն ճակատար, կը վերանորոգեմ ես այլ տողերի այստեղ՝ իրբեւ մինչեւ հիմայ գրածներու պատշաճ վերջաբան մը. « Մեր հոգեւորականութիւնը եւ հոգեւոր հիմնարկութիւնները, իրբեւ այնպիսի մարմիններ՝ որ արգէն հուծեան կնիք են կրում իրանց վրայ, նոյն իսկ իրանց շահի տեսակէտից, անպայման կարիք ունեն խիստ դիտարկելու պահելու՝ իրանց բոլոր

գործառնութիւնների մէջ, եթէ չեն ուզում վերջնականապէս խախտելու իրենց գոյութեան հիմքը: — Գիտցիցիմու ասելով մենք հասկանում ենք սահմանադրական տրդար յարաբերութիւնների կտայ, որ պահանջում է իշխանութից՝ ճանաչել ստորագրեալի իրաւունքը, իսկ ստորագրեալից՝ յարգել իշխանութի վերքը »: ... « Եթէ մեր հոգեւորական պատակարգը եւ հոգեւոր հիմնարկութիւնները ուզում են իմանալ իրանց անկման եւ թուլութեան գլխաւոր պատճառները, չպիտի մոռանան՝ որ այլ պատճառներից մէկն էլ է դիտարկելու ըստ անհրաժեշտ էլ, որ՝ մի կողմից՝ իշխանութիւններին պարձնում է կամայական, իսկ ստորագրեալներին՝ հաւատարմութիւն, եւ կամ՝ հակառակը՝ ստորագրեալներին պարձնում է ծպտեալ իշխանութիւն, իսկ իշխանութիւն՝ ծիծաղելի ուշուշութիւն »: — « Մշակ. 1897, թ. 137 »:

Հ. Ա. ՏԻՐԱՆՅԱՆ

Ա Ռ Ա Ծ Ք Ն Ա Խ Ն Ե Ա Ց



Այն օրն որ ի մօրէ կու ծնանէիր, ամէն ուրախանային, զու լայիր, էնց բան արտ՝ որ այն օրն որ մեռանիտ՝ ամենեքին լան, զու ուրախանաս:

Մարդն հոգի է ու լեզու. և լեզուն հոգոյն չարկամ՝ է. Թէ՛ զհոգիդ կ'ուզես՝ զլեզուդ պահէ:

Թէ՛ տասն խոռք բարի գիտես, զու զինն խօսեաց՝ զմին պահէ. Թէ՛ խոռք շատ գիտեսաս՝ քիչ առա. զմէկն՝ հարիր մի ասել, զհարիրն՝ մէկ ասա:

Խօսքն մօտ գիտնաւորն՝ մեծ է, վասնզի յերկնից եկաւ. իսկ զու թեթեւ մի բաներ, Ձխօսքն գիտութեամբ պարտ է պաս ասել. սակալ կ'առել և ապա խօսել:

Լեզուն ճուղ ունի քան զօձու, զմէկն մարդարիտ կու թափէ, զմէկն ժահր:

Ի սեւ ամպոյն և ի խելայեղ մարդոյն մի վախենար. այլ ի սպիտակ ամպոյն և ի խելօք մարդոյն:

Բանութեամբ բան ի հուն չեւանէ. այլ կակզութեամբ օձն ի ծակէն ելանէ:

